# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾԱՏԱՂԱՆԴ ԶԱՎԱԿԸ

## ԼՐԱՑԱՎ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 185-ԱՄՅԱԿԸ

Մեծ գրող, հրապարակախոս, փիլիսոփա, հեղափոխական-դեմոկրատ, հայ ռեալիստական գեղագիտության ու քննադատության հիմնադիր, ազգային ականառու գործիչ Միքայել Նալբանդյանը ծնվել է 1829 թվականի նոյեմբերի 14-ին Նոր Նախիջևան քաղաքում:

Սկզբնական կրթությունը նա ստացել է Օգսենտ վարժապետի մոտ՝ կարճ ժամանակում գերազանցելով երկամյա դասընթացները: Ապա նա ուսումը շարունակել է Գաբրիել Պատկանյանի մասնավոր դպրոցում, որտեղ անցել է բազմաթիվ առարկաներ:

1848 թվականի հուլիսի 17-ին Նալբանդյանը ստանձնում է Հայ առաքելական եկեղեցու Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմական առաջնորդի քարտուղարի պաշտոնը: "Արարատ" շաբաթաթերթի 1851 թվականի հունվար, մարտ, ապրիլ ամիսների համարներում լույս են տեսնում բանաստեղծի մի շարք ստեղծագործությունները:

Աշխատելով մինչև 1853 թ. հուլիսի 8-ը Նալբանդյանը նույն ամսին մեկնում է Քիշինև, ապա Մոսկվա և անցնում Պետերբուրգ: Սեպտեմբերի 24-ին Պետերբուրգի համալսարանում քննություններ է հանձնում և ավարտելուց հետո մեկնում Մոսկվա: Այստեղ Լազարյան ճեմարանի առաջին և երկրորդ դասարաններում դասավանդում է հայոց լեզու:

1855-1858 թվականներին Նալբանդյանը սովորում է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

Իր կյանքի մոսկովյան շրջանի առաջին տարվա դեպքերի ազդեցության տակ նա գրում է "Նու խորոշո" սատիրական բանաստեղծությունը: Ինքնուրույն գործեր գրելուց բացի կատարում է թարգմանություններ Պուշկինից և Լերմոնտովից:

1856 թվականին Նալբանդյանը կազմում է "Հյուսիսափայլ" ամսագրի նախագիծը և ներկայացնում լուսավորության մինիստրությանը՝ հրատարակության թույլտվություն ստանալու համար: Նույն թվականի մարտի 17-ին Ալեքսանդր Երկրորդը թույլատրում է պարբերականի հրատարակությունը: Իսկ 1857 թվականի մայիսի 30-ին Մոսկվայում լույս է տեսնում "Հայտարարությունը" ամսագրի ծրագրի և բաժանորդագրության պայմանների մասին: Դեկտեմբերի 14-ին գրաքննությունը տպագրության է թույլատրում "Հյուսիսափայլի" առաջին (հունվարի) ամսատետրակը: Մարտ, ապրիլ ամիսներին լույս են տեսնում "Հյուսիսափայլի" երկրորդ և երրորդ ամսատետրակները, ուր Նալբանդյանը տպագրում է Կլեմանս Ռոբերտի "Դքսուհի դը Շևրեոզ" իր թարգմանած վիպակը:

Ապա նա գրում է "Հեգելը և նրա ժամանակը" փիլիսոփայական աշխատությունը, հորինում է "Ոհ սենյակ..." և "Անցած օրերի" բանաստեղծությունները: Գրաքննության է ուղարկում "Ազգային ժառանգությունը" հոդվածը:

1859 թվականի մարտի 24-ին Նալբանդյանը մեկնում է արտասահման՝ Բեռլին, Փարիզ, Լոնդոն, այլ քաղաքներ: Փարիզում գրում է "Մանկության օրեր", "Ապոլոնին" բանաստեղծությունները:

"Հյուսիսափայլի" ութերորդ ամսատետրակից սկսվում է "Մեռելահարցուկ" վեպի և շարունակվում "Հիշատակարանի" տպագրությունը:

1860 թվականի ապրիլի 4-ից մայիսի 5-ը Նալբանդյանը քննություններ է հանձնում Պետերբուրգի համալսարանում: Մինչև հունիսի 7-ը գրում է դիսերտացիա և ներկայացնում արևելյան ֆակուլտետի դեկանին՝ թեկնածուի գիտական աստիճան ստանալու համար:

Հունիսի 15-ին նա մեկնում է Մոսկվա, ապա Նոր Նախիջևան: Օգոստոսի 17-ին մեկնում է Էջմիածին, հետո գալիս Թիֆլիս: Կովկասի փոխարքայի դիվանատանը ստանում է անձնագիր՝ արտասահման մեկնելու համար: Նոյեմբերի սկզբից սկսում են հետապնդել Նալբանդյանին, նպատակ ունենալով արտասահման մեկնելուց առաջ ձերբակալել: Տեղյակ լինելով թշնամիների դավերին, նա գաղտնի մեկնում է Փոթի, այնտեղից էլ Բաթում:

*Նալբանդյանի պահանջն է՝ ամեն ինչ ժողովրդի համար և ամեն ինչ նրա միջոցով:*
*Ալեքսանդր ՄՅԱՍՆԻԿՅԱՆ*



Նոյեմբերի 14-ին ուղևորություն է կատարում դեպի Հնդկաստան: Ճանապարհին լինում է Տրապիզոնում, Պոլսում, Նեապոլում, Հռոմում, Ջենովայում, Փարիզում, Լոնդոնում: 1861 թվականի մարտին Փարիզում գրում է "Երկու տողը" պամֆլետը: Ապրիլի 19-ին Փարիզից ուղևորվում է Կալկաթա: Ճանապարհին նա լինում է շատ քաղաքներում: Իսկ նոյեմբերին հաջողությամբ ավարտելով հնդկահայ մեծահարուստ Մասեհ Բաբաջանյանի Նոր Նախիջևանին թողած կտակների գործը, Կալկաթայից մեկնում է Լոնդոն: Այստեղ 1862 թվականի մարտի սկզբին սկսում է գրել "Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ" աշխատությունը: Ամսվա վերջին այցելում է Գերցենին: Մինչև ապրիլի 12-ը Փարիզում տեսակցում է Տուրգենևին: Մայիսին Փարիզում լույս է ընծայում "Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ" աշխատությունը՝ Սիմեոն Մանիկյան ծածկանունով:

1862 թվականի մայիսի 26-ին Նալբանդյանը վերադառնում է Պետերբուրգ, ապա գալիս է Նոր Նախիջևան: Հուլիսի 14-ի առավոտյան Նոր Նախիջևանում Եկատերինոսլավի ժանդարմական խումբը խուզարկում է Նալբանդյանի բնակարանը, բռնագրավում բազմաթիվ թերթեր, թղթեր, լուսանկարներ, հայերեն և ռուսերեն կանգան նամակներ և ձերբակալելով Նալբանդյանին տանում Եկատերինոսլավ: Այնուհետև նա բերվում է Պետերբուրգ և բանտարկվում Պետրոպավլովյան բերդի Ալեքսեևյան ռավելինի թիվ 6 խցում (այստեղ անցկացրել է 1962 թվականի հուլիսի 27-ից մինչև 1865 թվականի մայիսի 13-ը):

1863 թ. հունվարի 11-ին Նալբանդյանը սկսում է բանտի իր օրագիրը: Բանտում սաստկանում է նրա հիվանդությունը: Նամակներ է գրում, ստանում գրքեր, զբաղվում ընթերցանությամբ: Ապրիլի 1-ին գրում է "Մեր լեզվի արմատական բարեփոխության փորձ" աշխատությունը, օգոստոսի 12-ին սկսում է գրել "Հեգելը և նորա ժամանակը" փիլիսոփայական աշխատությունը, որն ավարտում է մի քանի օր անց: 1864 թ. փետրվարի 1-ին ավարտում է "Սոս և Վարդիթերի" կրիտիկան": Ամռանը գրում է "Աղցմիք" հակակրոնական-սատիրական բանաստեղծությունների շարքը և "Արկածք նախահորն" պոեմը: Նույն թվականին գրում է "Մամիկոնյան մեծ Վահանի պատասխանը" և "Հիշենք" բանաստեղծությունները՝ "Գամառ-Քաթիպայի բանաստեղծությունները" գրքի ընթերցումից հետո:

1865 թ. մայիսի 19-ին Նալբանդյանին աքսորում են Ռուսաստանի հեռավոր քաղաքներից մեկը ոստիկանության խիստ հսկողության տակ: Նոյեմբերի վերջին նա հասնում է իր աքսորավայրը՝ Սարատովի նահանգի Կամիշին քաղաքը:

1866 թվականի մարտի 31-ին Նալբանդյանը վախճանվում է: Ապրիլի 2-ին Կամիշին է գալիս Գրիգոր Նալբանդյանը, թույլտվություն ստանում նահանգապետից և եղբոր աճյունը տեղափոխում Նոր Նախիջևան: Ապրիլի 14-ին մեծ շուքով հայ ժողովրդի մեծատաղանդ զավակ Միքայել Նալբանդյանի աճյունը հողին են հանձնում Սուրբ Խաչ վանքի բակում:

### ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Նալբանդյանը դարձել է իր ժամանակի լուսավոր աշխարհի սակավաթիվ առաջադեմ մարդկանցից մեկը, ճոխացած եվրոպական գիտությունով ու լայն, ազատական մտքերով, լավագույն մտածողների ընկերն ու մտերիմը: Հալածանքի մեջ էլ վերացել է մեր կյանքի անձուկ ու վատ մթնոլորտից դեպի էն հավերժական բարձրությունը, որտեղից դենը էլ տեղ չկա լավ հոգիների համար, և հավերժացել է Հայոց Գրականության համաստեղության մեջ ու դարձել նրա ամենավառ, ամենապայծառ աստղարից մեկը:

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

* * *

Երևցավ նա որպես պինված մարգարե՝ մի ձեռքում ջահ, մյուսում՝ սուր: Գրեթե մի ամբողջ դար նա լուսավորում էր մեր ուղին՝ ցույց տալով կարգացման, առաջադիմության ճշմարիտ ուղին, մարտնչելու բռնության դեմ, ստրկական կարգերի ու մտայնության դեմ՝ հանուն հայրենիքի և հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական ազատության, հանուն մարդկային ու համամարդկային ազատության ու եղբայրության:

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

* * *

Ինձ քաղցր էր այդ պաշտելի տղամարդի հավիտենական հիշատակը հարգել՝ իմ աշխատությանց երախայրիքը նորան ընծայելով: Թեպետ "Սալբի"-ի հեղինակը չէ ունեցել պատվելի Հանգուցելո հետ խիստ մոտավոր ծանոթություն, բայց քանի կա և կապրի հայոց լեզուն և գրականությունը, Մ. Նալբանդյանցի անմահ հիշատակը միշտ կունենա յուր զգալի համակրությունքը ամեն մի հայի սրտում մինչև դարերի վերջը:

ՐԱՖՖԻ

* * *

Միքայել Նալբանդյան... Որքան սիրել ենք այդ լուսապայծառ մարդուն մեր մանկությունից մինչև պատանեկություն՝ երիտասարդությունից մինչև ծերություն: Երբեք չի թառամում նրա լուսապսակը, երբեք չի սառչում այդ սերը:

Դերենիկ ԴԵՄԻՐՃՅԱՆ

* * *

Միքայել Նալբանդյանը մեծ հումանիստ լինելով՝ բոցավառ սրտի տեր էր: Ինչպես ինքն է ասում. "ազգի վիճակը սրտին ծանրացած" նա ինքնակամ պինվոր է գրվում հասարակ ժողովրդի իրավունքները պաշտպանելու, ու պաշտպանում է անվախ, համարձակ, ողջ էությամբ, երկյուղ չկրելով բանտից, աքսորից, մահից:

Ստեփան ԶՈՐՅԱՆ

* * *

Նալբանդյանը ոսկի հոգի ունի, նվիրված է անշահախնդիր, նվիրված է միամտորեն սրբության հասնող չափով:

Նիկոլայ ՕԳԱՐՅՈՎ

* * *

Դու լավ ծանոթացիր Նալբանդովի հետ, փայփայիր նրան: Նա ոսկի մարդ է՝ ամբողջովին հոգի ու ամբողջովին նվիրվածություն: Հենց առաջին րոպեից, կարծում եմ, կսիրես նրան: Իսկ Տուրգենևն, ահա, օրինակի համար, ուրիշ բան է. նա նույնպես շատ բարի է, բայց աստված էլ գիտե, որ ինքն աստված է: Տուրգենևը և խելացի է, և սիրալիր, բայց չի մոռանում իրեն. չունի այն սուրբ պարզությունը, որ ունի Նալբանդյանը, որը գրավում է ոչ թե խելքով, այլ սրտով:

Միխայիլ ԲԱԿՈՒՆԻՆ